Azg
armenian daily
2 ՄԱՐՏ 1996. ՇԱԲԱԹ # 40 (1046)

Թուրքիայի նոր կառավարությունը՝ հաջորդ շաբաթ

ԱՆԿԱՐԱ, 1 ՄԱՐՏ, RFI: «Մայր հայրենիք» եւ «Ճշմարիտ ուղի» կուսակցությունների առաջնորդները, համաձայնագիր Մեսաթ Յըլմազն ու Թանսու Չիլլերն այսօր կոչին հանդիպելուց հետո հայտնեցին, թե մինչեւ կիրակի օրը իրենց միջեւ կայանալիք հանդիպումների ընթացքում կորոշվի եւրոպական աղագա կառավարության կազմը եւ առաջիկա շաբաթ Թուրքիան Կոժսվի նոր կառավարությամբ, որտեղ հերթագայությամբ առաջին վարչապետը կլինի Յըլմազը:

Իսպանիայում աջերի հաղթանակը՝ աղաւոով

ՄԱԴՐԻԴ, 1 ՄԱՐՏ, WSJ, RFI: Իսպանացիները կիրակի օրը ընտրեցին ներկայանալ ընտրելու ի հենց նոր խորհրդարանը: Պաշտոնական վերջին հարցազրույցի արդյունքներով, նախատեսվում է Խոզե Մարիա Ազնարի աջակողմյան ժողովրդական կուսակցության հանգիստ հաղթանակը, որով վերջ կդնի վարչապետ Ֆիլիպե Գոնզալեսի գլխավորած սոցիալիստական կուսակցության 13 ամյա իշխանությունը: Ընտրությանն ընդառաջ ոստիկանությունը ամբողջ երկրով մեկ ուժեղացրել է անվտանգության միջոցառումները, վախենալով բասկ անջատողականների խանգարիչ գործողություններից:

ԵՐԵՎԱՆ

Համագործակցություն՝ դե ֆակտո

Իսկ «մնացածը տեխնոլոգիա է», գտնում է ԱՀ նախագահը

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Երեւանում էր գտնվում ԼՂՀ խորհրդարանական պատվիրակությունը խորհրդարանի նախագահ Կարեն Բաբուրյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին ԼՂՀ խորհրդարանի փոխտարը, հանձնաժողովի նախագահներ: Պատվիրակությունը հանդիպեց ՀՀ նախագահի, ԱԳ նախարարի եւ ԱԺ նախագահի հետ:

Մարտի 1-ին ԱԺ-ի ոսկեզօծ դահլիճում ստորագրվեց համաձայնագիր ՀՀ Ազգային ժողովի եւ ԼՂՀ խորհրդարանի համագործակցության մասին: Համաձայնագիրը ստորագրեցին 2 խորհրդարանի նախագահներ Բաբկեն Առարքելյանը եւ Կարեն Բաբուրյանը:

Ստորագրման արարողությունը նախատեսված էր 30 րոպե ուշացումով սկսվեց. ինչը հավանաբար հետեւանք էր երկուսեմ դուսուորվող «հայկական բնավորության»: Ըստ որոշ. Առարքելյանի, այս համաձայնագիրը «ոչ թե սկիզբ է, այլ շարունակություն»: Դեռեւս 1994 թ. մայիսի 4-ին Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում ստորագրեցին արձանագրություն Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի խորհրդարանների նախագահները:

Տես էջ 2

Շահումյան-Գեսաշենի հարցն անբաժանելի է Արցախի հիմնախնդրից

Երեկ Երեւանի մանկավարժական ինստիտուտի դահլիճում հավաքվել էին շահումյանցիներ, գեսաշենցիներ, մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ՝ մասնակցելու «Գարուն բերենք Շահումյան-Գեսաշենին» նշանաբանով գարնան առաջին օրն անցկացվող հասարակական քաղաքական հանդիպմանը, որին ներկա էր ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆաղեյ Սարգսյանը: Ելույթ ունեցողները՝ Շահումյանի համայնքի նախագահ Դերենիկ Պետրոսյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը, շահումյանցիներ, հաստատեցին հայրենիք վերադառնալու, հայրենի հողի վրա արժանապատվորեն ապրելու իրենց հավատը եւ վճռակամությունը. «Ծնվել միայն Շահումյանում, ապրել միայն Շահումյանում, մեռնել միայն Շահումյանում»:

Ելույթ ունեցավ նաեւ Հայաստանում ԼՂՀ մշակութային ներկայացուցչության աշխատակցուհի Անահիտ Աղաբալյանը, որը հավաքվածներին փոխանցեց այս օրերին Երեւանում գտնվող Ռոբերտ Քոչարյանի ջերմ ողջույնը: «Շահումյանի եւ Գեսաշենի նկատմամբ ուղեցույցը հետեւյալ սկզբունքների պահպանումն է. 1. Շահումյանի եւ Գեսաշենի խնդիրն անբաժանելի է Արցախի հիմնախնդրից: 2. Ակտիվ գործունեության ծավալումը (հույս դնել միայն սեփական ուժերի վրա)», ասաց նա՝ ավելացնելով, որ Շահումյանի եւ Գեսաշենի հարցը միշտ առկա է եւ բարձրացվում է բոլոր բանակցություններում, որ ադրբեջանական կողմը շարունակում է այսպես կոչված գրավյալ տարածքների խնդիրը:

Լ. Պ.

ՔԱՔՈՒ

Ղարաբաղի ինքնավար պետություն Ադրբեջանի կազմում

Ամերիկայի ծրագրով Ղարաբաղին հատկացվում է «շատ բարձր կարգավիճակ»

ԲԱՔՈՒ, RL: Հինգշաբթի օրը Ֆրանսիայում գործակալությունը մի հաղորդագրություն է հրապարակել, որը Ինտերֆաքս գործակալության հաղորդման վրա է հիմնված: Հաղորդագրության սկզբնաղբյուրը քաղաքական ադրբեջանցի բարձրաստիճան անանուն մի դիվանագետ է: Ֆրանսիայի հաղորդագրության համաձայն, Միացյալ Նահանգները նախագծել է Ղարաբաղյան կարգավորման ծրագիր, որով նախատեսվում է Լեռնային Ղարաբաղին շնորհել ինքնավարության շատ բարձր կարգավիճակ: Այդ կարգավիճակը բնութագրվում է իբրեւ ինքնավար պետություն: Ընդ որում, Ղարաբաղի ինքնավար պետությունը շարունակում է մնալ Ադրբեջանի կազմում: Ըստ բարձրաստիճան դիվանագետի՝ ամերիկյան նոր ծրագրի համաձայն Ղարաբաղը կունենա իր զինված ուժերը, խորհրդարանը, կառավարությունը եւ իրավական մարմինները: Լայնքի միջազգային վերահսկողության տակ, իսկ իրադրության կարգավորումից հետո այն կանցնի Ադրբեջանի վերահսկողության տակ: Վկայակոչելով ադրբեջանցի դիվանագետին, Ֆրանսիայի հաղորդումը է, որ Օրեսելի կողմից ադրբեջանական իշխանություններին հանձնված ծրագրով Շուշին մնում է Ղարաբաղի կազմում:

Ադրբեջանական Թուրան լրատվական գործակալությունն ու ադրբեջանական թերթերն էլ են նման բովանդակությամբ լուր հաղորդել: Այդ լուրը նրանց Ադրբեջանի ընդդիմադիր «Ազգային անկախություն» կուսակցության նախագահ Էթիբար Սամեդովն էր հայտնել, ըստ որի Բաքվում եղած ժամանակ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբում ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ջոզեֆ Օրեսելը հանդիպել էր ընդդիմադիր կուսակցությունների ղեկավարներին եւ ծանոթացել էր նրանց Լեռնային Ղարաբաղի կարգավորման ամերիկյան ծրագրի էությանը: Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպանատունը պաշտոնապես հերքել է այդպիսի ծրագրի գոյությունը: Սակայն թեեւ պաշտոնական Ադրբեջանը չի մեկնաբանել այս հաղորդագրությունները, այնուհանդերձ Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովի հայտարարությունն այն մասին, թե «Ադրբեջանը չի կարող համաձայնել այն դիրքորոշմանը, ըստ որի իրողության պայմանները թելադրում է հաղորդը», կարելի է պաշտոնական Բաքվի արձագանքը համարել:

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑ

Ֆլավիո Կոտտի. «Կողմերը եւ խիստ դիրք ունեն, եւ պատրաստ են փոխզիջման»

Արկադի Ղուկասյանը չի բացառում հարաբերական ընդարձակում Ղարաբաղի վրա

ՏԻԳՐԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԵԱՀԿ նախագահ, Շվեյցարիայի արտգործնախարար Ֆլավիո Կոտտին տարածաշրջան այցը բաս Լեռնային Ղարաբաղ նոր բեկում չմտցրեց դարաբաղյան խնդրի կարգավորման խաղաղ բանակցությունների գործընթացում: Այն ավելի շատ կրեց հանդարտող կողմերի դիրքորոշումների ճշգրտման եւ ծանոթության բնույթ եւ եզրափակվեց Երեւանի ընդունելությունների տանը լրագրողների հետ հանդիպմամբ: Նշելով, որ բոսնիական խնդրի նմանությամբ Ղարաբաղի հիմնահարցն էլ գտնվում է ԵԱՀԿ-ի ուշադրության կենտրոնում, որոշ. Կոտտին հայտարարեց, թե Հայաստանի նախագահի, արտգործնախարարի եւ Լեռնային Ղարաբաղի նախագահի հետ հանդիպումներից հետո ավելի խորը պատկերացում կազմեց հակամարտության մասին: Շվեյցարիայի արտգործնախարարը հայտնեց, որ մեծ տեղ են տալիս թե ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքներին եւ թե երկկողմ շփումներին:

Խոսելով դեյթոնյան համաձայնագրի ոչ բոլոր կետերն են կիրառելի Ղարաբաղի հարցում, որովհետեւ այստեղ այլ պատմա-աշխարհագրական խոչընդոտներ հայտնեց, որ մեծ դեր են տալիս թե ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքներին եւ թե երկկողմ շփումներին:

Խոսելով դեյթոնյան համաձայնագրի եւ Ղարաբաղի խնդրում նմանատիպ որոշումներ կայացնելու հնարավորության մասին, Ֆլավիո Կոտտին նշեց, որ երկրորդ այցի ընթացքում իմքր մեծ նմանություն է տեսել այդ խնդիրների միջեւ: Բնականաբար դեյթոնյան համաձայնագրի ոչ բոլոր կետերն են կիրառելի Ղարաբաղի հարցում, որովհետեւ այստեղ այլ պատմա-աշխարհագրական խոչընդոտներ կան: Բայց, օրինակ, համաձայնագրի կնքումից հետո դեռեւ է նախատեսել միջազգային հանրության ներկայությունը, որոնցի որոշակի երաշխիքներ տվեն ստորագրված համաձայնագրին: Պատասխանելով մեր այն հարցին, թե Բաքվի եւ Երեւանի հանդիպումներ

Տես էջ 2

Համաշխարհային բանկի համար միեւնույն է, թե ով է իշխում

ԵՐԵՎԱՆ, 1 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Համաշխարհային բանկի տրամադրած երկու վերջին վարկերը ոչ մի կապ չունեն սեպտեմբերին կայանալիք նախագահական ընտրությունների հետ, այդպիսի հայտարարությամբ հանդես եկավ Հայաստանում ՀԲ-ի արտակարգ եւ լիազոր ներկայացուցիչ Վահրամ Ներսիսյանցը, որպես օրը կայացած մամլո ասուլիսում պատասխանելով լրագրողներից մեկի հարցին:

Ըստ ՀԲ-ի ներկայացուցչի, Համաշխարհային բանկի կողմից նմանատիպ վարկ անցած տարեսկզբին ես տրամադրվել է, որպեսզի կառավարությունը կարողանա համաձայնել բյուջեն: Բացի այդ, այն կնպաստի այլ դոնոր կազմակերպությունների Հայաստան գալը:

Համաշխարհային բանկը միջազգային ֆինանսական կազմակերպություն է եւ, Վ. Ներսիսյանցի ասելով, ՀԲ-ի համար տարբերություն չկա, թե ով է իշխում: Կարեւորն այն է, որ տվյալ երկիրը դեկավարում է բարեփոխումների ջատագով տնտեսագետների թիմ: Այդ իսկ պատճառով ՀԲ-ի ներկայացուցիչը հանդիպումներ է ունենում ոչ միայն իշխանությունների, այլ նաեւ ընդդիմադիր ուժերի հետ:

Ըստ Հայրիկյանի, նախագահի նախընտրական ծախսը 10 միլիոն դոլար է

ԵՐԵՎԱՆ, 1 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Նախագահական ընտրությունները ԱԻՄ-ի խնդիրը, եւ ոչ էլ քաղաքական կուսակցությունների խնդիրը չէ: Եթե ժողովուրդ նախագահական ընտրությունների մեջ տեսնում է իր վիճակը բարելավելու ճանապարհը, ուրեմն այն համընդհանուր խնդիր է», մարտի 1-ին կայացած հանդիպմամբ հայտարարեց Ազգային ինքնուրույն միավորման (ԱԻՄ) նախագահ Պետրոս Հայրիկյանը:

Նա նշեց, որ դեռեւ է լրջորեն վերաբերվել նախագահական ընտրություններին, քանի որ «չգիտեմ է մոտենալ, որ ընտրություններում մեր դեմ կանգնած է դեպությունը՝ իր ողջ դրամագլխով»: Ըստ Պ. Հայրիկյանի, նախագահը նախընտրական պայքարի վրա ծախսելու է 10 մլն ամերիկյան դոլար, այն դեպքում, երբ ԱԻՄ-ը ի վիճակի է տրամադրել ընդամենը 100 հազար դոլար:

Հերթական «Բոինգը» ընկավ

1 ՄԱՐՏ, BBC: Պերուի հարավում վթարի է ենթարկվել մայրաքաղաք Լիմայից Արեկիպա քաղաք թռող FOSOP ընկերության «Բոինգ 737» մակնիշի մի օդանավ, որը 120-ից ավելի ուղեւոր էր փոխադրում: Փրկարար թիմերը գտել են օդանավի ընկնելու վայրը: Պաշտոնական ներկայացուցիչների հաղորդումների համաձայն՝ բոլոր ուղեւորներն էլ զոհվել են: Դա Պերուում երբեւիցե տեղի ունեցած ամենամեծ ավիավթարն է:

Վրաստանը պայմաններ է դնում Ռուսաստանի դեմ

ԹԲԻԼԻՍԻ, AGBU NEWS, BBC: Թբիլիսիից ներից մեկին հաղորդվել է վրացական հավատի աղբյուրներից իմանալ, որ փետրվարի 26-ին Վրաստանում ՌԴ դեսպան Վլադիմիր Չեմսկին հանդիպում է ունեցել խորհրդարանի նախագահ Զուրաբ Ժվանիայի հետ եւ խնդրել ազդանշել ռուսական ռազմակայանների մասին պայմանագրի վավերացումը, ինչը, նրա ասելով, կօգնի երկու երկրների հարաբերությունների բարելավմանը: Ի պատասխան դրա, Ժվանիան ասել է, որ վավերացման հարցը անմիջականորեն կապված է Աբխազիայի հակամարտության կարգավորման հետ: Նա ասել է, որ խորհրդարանը կվավերացնի փետրվարի 3-ին նախագահ Ելցինի Վրաստան կատարած այցի ընթացքում ստորագրված պայմանագիրը միայն այն բանից հետո, երբ Ռուսաստանը կօգնի Վրաստանին վերադարձնելու իր տարածքային ամբողջականությունը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԱՆՐԱՊԱՐՏ

«Ազգի» բացատրագիրը ՀՀ դատախազության նախազգուշացման առթիվ

«Ազգի» խմբագրությունը վերջերս արժանացավ ՀՀ դատախազության ուշադրությանը՝ ՀՀ առողջապահության նախարարի գանգատի վրա նախազգուշացում ստացավ Հայաստանում գրիպի համաճարակի դատճառած զոհերի մասին տրված նյութի առիթով: Այսուհանդերձ, ժամանակավրվածության համաձայն՝ թերթի խմբագրությունը փետրվարի 28-ին ՀՀ դատախազությանը ներկայացրեց հարցի մասին իր բացատրագիրը, որը տպագրում ենք ստորև:

Ի հավելումն ս. թ. փետրվարի 21-ին ՀՀ դատախազությունում մեզ ներկայացված Ձեր գրավոր նախազգուշացման բովանդակությանը, որտեղ նշված է «Ազգ», 01.02.96 թ.), որտեղ արտատպել էինք Associated Press ամերիկյան լրատվական գործակալության հաղորդած լուրն այն մասին, թե Հայաստանում գրիպի համաճարակի ընթացքում մահացել է 48 մարդ, որոնցից 6-ը՝ Սևանի հոգեբուժարանում, այսու հայտնում ենք, որ Հայաստանում գրիպի համաճարակի մասին, բացի վերոնշյալից, հրատարակել ենք նաև ուրիշ 2 տեղեկատվություն, առաջինը՝ 1995 թ. դեկտեմբերի 29-ի մեր համարում՝ «Գրիպի դեմ դատվասումներն անիմաստ են», իսկ երկրորդը՝ 1996 թ. փետրվարի 16-ին՝ «Գրիպի համաճարակի զոհերի թիվը դեռևս ստուգված չէ» խորագրով:

Դրանցից մանավանդ վերջինը, չգիտես ինչու, կա՛մ վրիպել է ՀՀ առողջապահության նախարարության ուշադրությունից, եւ կամ, ինչն ավելի հավանական է թվում, չեն ուզեցել տեսնել, որպեսզի փորձեն ՀՀ դատախազության միջոցով «վրեժխնդիր» լինել տվյալ հարցում մեր թերթի սուր հետաքրքրության համար: Այնինչ հենց այդ՝ «Գրիպի համաճարակի զոհերի թիվը դեռևս ճշված չէ» վերնագրով մեր հրատարակած նյութը, որը Արմենպրեսի հաղորդագրությունն էր հանդիսանում, ինքնին կարելի էր դիտել, ինչպես վերնագիրն է հուշում, որպես հերքում մեր նախապես տված տեղեկության, չնայած համոզված չենք, որ Associated Press-ի հաղորդածն անճիշտ է եղել: Հերքում ինչը մենք արել ենք ՀՀ դատախազությունից «Նախազգուշացումն» ստանալուց առաջ, ինչպես պահանջում է ՀՀ մամուլի մասին օրենքը:

Ինչպես դատախազությունում զրույցի ժամանակ նշել ենք, փետրվարի 1-ի մեր հրատարակման մեջ գրիպից 48 մարդու մահանալու մասին տվյալը մենք բարգմանաբար ներկայացրել էինք ամերիկյան վերոհիշյալ գործակալությունից, նշելով նաև լրատվության աղբյուրը, ինչը, մեր կարծիքով, մեր թերթին զերծ է կացուցում որեւէ պատասխանատվությունից: Պատասխանողը պետք է լինի նշյալ գործակալությունը:

Երրորդ՝ ինչ վերաբերում է Սեւանի հոգեբուժարանում գրիպից մահացած 6 հիվանդների պարագային, ուզում ենք տեղեկացնել, որ այդ նույն տեղեկությունը հասատել է նաեւ պետական պաշտոնական լրատվական մեր գործակալությունը՝ Արմենպրեսը, որի նկատմամբ, սակայն, որեւան մեզ հայտնի է, որեւէ գանգատ ներկայացված չէ ՀՀ առողջապահության նախարարության կողմից, ինչը պետք է դիտել իբրեւ այդացյալն այն բանի, որ Արմենպրեսի հաղորդած տեղեկությունը ստույգ է եղել:

Վերջում կուզեի հարց տալ, որ եթե առաջիկա ապրիլ ամսին, ինչպես խոստանում է ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ պետվիճվարությանը վերջապես հաջողվի ամփոփել ու ճշգրտել, թե գրիպի համաճարակից մեր հանրապետությունում մահացել է քանի՞ 48 կամ ավելի մարդ, ՀՀ դատախազությունը կերաշխավորի՞ արդյո՞ք ՀՀ առողջապահության նախարարությանն հերքման կամ ներողամտության մասին արտահայտություն ուղղված մեր թերթին:

Խորին հարգանքներով՝

Հ. Ավետիսյան
Գլխավոր խմբագիր

ԵՐԵՎԱՆ

Արտգործնախարարությունների համագործակցության հայ-չեխական համաձայնագիր

Մարտի 1-ին Երեւանում էր գտնվում Չեխիայի ԱԳ 1-ին փոխնախարար Ալեքսանդր Վոնդրան: ՀՀ փոխարտգործնախարար Վարդան Օսկանյանի հետ նա ստորագրեց համաձայնագիր երկու երկրների արտգործնախարարությունների միջեւ համագործակցության մասին: Դրան կհաջորդեն մի շարք նոր համաձայնագրեր, որոնք իրավական հիմք կստեղծեն մեր երկրների քաղաքական, տնտեսական եւ մշակութային համագործակցության համար: Ստորագրման արարողությունից հետո հրավիրված մամուլի ասուլիսում երկու նման մակարդակի առաջին հանդիպումն էր Հայաստանի եւ Չեխիայի անկախացումից հետո: Հայտնվեց նաեւ, որ չեխ հյուրը մեծ հետաքրքրություն է հանդես բերել մեր տարածաշրջանում տիրող իրավիճակի, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման նկատմամբ Չեխիան Մինսկի խմբի հիմնադիր անդամներից է:

Նույն օրը երեկոյան Ալեքսանդր Վոնդրան մասնակցեց Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի եւ համագործակցության հայկական ընկերության դահլիճում կայացած «Հայաստան-Չեխիա» ընկերության շնորհանդեսին: Բացելով այն, ԱՕԿՍ-ի համանախագահ Լավրենտի Բարսեղյանը հավաքվածներին ներկայացրեց «Հայաստան-Չեխիա» նոր ընկերության նախագահ, ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության պետ, նախարար Ստեփան Բարսեղյանին: Վերջինս, իր հերթին, հայտնեց մի շարք նկատառումներ այդ ընկերության հետագա գործունեության կազմակերպման մասին: Հարգանքով հիշատակվեց «Հայաստան-Չեխոսլովակիա» բարեկամության երիտասարդական ընկերության

ԱՐՄԵՆՊՐԵՍ

դոկտորներ Ստեփան Շահարյանն ու Էդվարդ Միրզոյանը, Հայաստանի կանանց կոմիտեի նախագահ Նորա Հակոբյանը, արվեստագետ Ալեքսանդր Ալեքսանյանը, ԱՕԿՍ-ի փոխնախագահ Հենրիկ Իգիթյանը եւ ուրիշներ:

Ջերմ ընդունելության արժանացավ Ալեքսանդր Վոնդրայի կարճատեւ, սակայն արտաքին, հումորով, հարուստ, ինչպես նաեւ լուրջ հարցադրումներ պարունակող ելույթը:

Պետք է հուսալ, որ երկու պետությունների միջեւ ստեղծված դրական ու մշակութային հարաբերությունները առաջիկայում առավել արգասավոր փուլ կթեւակոխեն:

ՌՈՒԲԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Արտգործնախարարությունների համագործակցության հայ-չեխական համաձայնագիր

ԽՆԳԻՐ

Ազատ տուկա. Դեմոկրատիա դեղաձեւերի վաճառքո՞ւմ

Ինչպես հայտնեց հոգեբույժ, Երեւան քաղաքի գլխավոր պսիխոթերապեւտ Հարություն Մինասյանը, վերջին մեկ ամսում արգելվել է հոգեներազդող դեղերի ազատ վաճառքը: Որքան էլ զարմանալի է, այդ կարգադրությամբ առողջապահության նախարարությունը որեւէ հրահանգ չի արձակել: Խնդիրն իրականացնում են ՆԳՆ, մասնավորապես թմրաբիզնեսի դեմ պայքարի վարչության աշխատակիցները: Ըստ որմ. Մինասյանի, ՆԳՆ օրակներին է տրված հրամանագիր եւ դեղերի ցուցակ, որի համաձայն դատապարտվության են ենթարկում այն մարդկանց, ում մոտ դրանք հայտնաբերում են: Երեւույթը չափազանց վտանգավոր է, որովհետեւ գանկացած հոգեկան հիվանդություն խորնիկ բնույթ ունի եւ ստացվածքը բուժումից հետո էլ անհրաժեշտ է շարունակել դեղորայքի ընդունումը: Չդնեմ է մոռանալ նաեւ, որ այսօրվա կենսական ծանր պայմաններում հանգստաբեր դեղերի կարիքը զգում է մեր հանրապետության բնակչության մեծ մասը: Ոստիկանության աշխատակիցները հսկողություն են իրականացնում նաեւ բուժհիմնարկներում, դեղատներում: Պարոն Մինասյանը, որը միաժամանակ «Մագիստրոս» հրատարակչության նախագահն է եւ «Նարեկ» բժշկական թերթի գլխավոր խմբագիրը, գնահատում է վաստակաշատ գանգատներից: Պետական ճանապարհով դեղեր Հայաստան չեն ներմուծվում, իսկ արգելափակումների հետեւանքով արտասահմանյան ընդունող մասնավոր անձինք դարձրեցնում են հոգեներազդող դեղաձեւերի ներկրումը: Սա առաջ է բերում դեղիցիտ, որի անմիջական հետեւանքն է դառնում գների աճը: Հոգեկան հիվանդների մեծ մասը հաշմանդամ է համարվում, չի աշխատում, բնականաբար ի վիճակի չէ նույնիսկ այսօրվա գործող սակագներով դեղորայք ձեռք բերել: Միաժամանակ, միայն դեղատներով վաճառքը, այն էլ մեկ դեղատանը, որտեղ ավելի մաշելի այլընտրանքի հնարավորություն չկա, իրեն չի արդարացնում:

Անշուշտ, կա նաեւ հակառակ [illegible] դեղերի նկատմամբ բացառված չէ անցառոյգ հետեւանքները: Ուստի դեղատոմսերով վաճառքը անհրաժեշտ է: Ի դեղ, ՆԳՆ նախարարության 6-րդ վարչության պետի տեղակալ Համլետ Հակոբյանը մեզ հայտնեց, որ դրանք քանիսն լուրեր են, այդպիսի հրահանգ չկա: Սակայն մեր հետագա հարցումներից հանգեցինք այն եզրակացության, որ վերահսկում կատարվում է: Հավանական է, ուստի մեզ տրամադրվեն հանրային փաստաթղթեր, թե բժիշկներից եւ պետդեղերից կրգեհարույց այդ բնում ջոր հանգստացնող դեղերն առգրավելու, ինչ հիմքեր կան: Այդ ժամանակ մենք կրկին հանդես կգանք եւ կիրարենք ավելի ճիշտ դիտարկել [illegible] ու դեղը:

ՏԱՐՈՒԲ ԳԱԼՍՏՅԱՆ

ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑ

Ֆլավիո Կոտտի. «Կողմերը եւ խիստ դիրք ունեն, եւ դատրաստ են փոխզիջման»

Սկիզբը էջ 1

«Այդ իմաստով դեռ երկար ճանապարհ պետք է անցնենք, որ կողմերի դիրքորոշումները մոտեցնենք», ասաց Կոտտին: Միաժամանակ, նա փաստեց, որ գտնվում են ճանապարհի կեսին, բայց նաեւ շատ բան է արվել, հաստատվել է հրադադար, որը դարձել է հետագա աշխատանքների հիմք:

Ցավոք, ԵԱՀԿ նախագահը մոռացավ դատասխանել մեր մյուս հարցին, թե ինչպես է վերաբերվում Լեռնային Ղարաբաղի ղեկավարության դիրքորոշմանը: Փոխարենը, ԼՂՀ արտգործնախարար Արկադի Ղուկասյանը առանձին մամուլի ասուլիսում ծանոթացրեց Շվեյցարիայի արտգործնախարարի հետ ԼՂՀ ղեկավարության հանդիպման արդյունքին, նշելով, որ շատ արդյունավետ է անցել: Արկադի Ղուկասյանը նշեց, որ ԵԱՀԿ նախագահը չի քննարկել նախորդ իրենց տրված նախագիծը, այլ միայն բավարարվել է տեսակետների ծանոթությամբ: Ինչ վերաբերում է հաստատական ճնշումներին, առա դատասխանելով մեր հարցին, արտգործնախարարը նշեց, որ նման հաղթական ճնշում իրենց վրա չեն զգում, թեեւ չեն բացառում դեղերի նման զարգացումը: Նրա կարծիքով, դժվար թե նման հաղթական ճնշումները լավ արդյունքի հանգեցնեն: Պետք է գտնվեն խնդրի կարգավորման այլ մեթոդներ: Այնուհետեւ Արկադի Ղուկասյանը հայտարարեց, որ Ղարաբաղը չի բացառում Ադրբեջանի հետ հորիզոնական կապերի հաստատումը: Նրա ասելով, որեւէ այլ որոշում, որը կենթադրի ուղղահայաց կապերը, Ղարաբաղը չի ընդունի: Ընդ որում, Արկադի Ղուկասյանը փոխզիջում համարեց ոչ միայն հորիզոնական կապերի հաստատումը, այլեւ այն, որ Ղարաբաղը հրաժարվել է Հայաստանի հետ միավորումից եւ այժմ դե ֆակտո անկախ հանրապետություն է: Եւ այն, որ երկու տարի շարունակվում է հրադադարը, ԼՂՀ արտգործնախարարը համարեց ոչ այնքան միջնորդների շնորհիվ, որքան կողմերի միջեւ հաստատված ուժերի հավասարակշռության: Նրա կարծիքով, Ադրբեջանը բանակցությունների ընթացքում անդրդվելի դիրք է գրավում, եւ ինչ որ տեղ քաղաքական մեծ համաձայնագրի կնքումը մտել է փակուղի: Արկադի Ղուկասյանը նշեց նաեւ, որ երեւանյան հանդիպումների ժամանակ շեշտվել է Ադրբեջանի տարածքային ամբողջականության խնդիրը, ինչին դարաբաղյան կողմը հակադրել է ազգերի ինքնորոշման իրավունքի խնդիրը: Բացի այդ, Արկադի Ղուկասյանը շեշտեց, թե Ղարաբաղը երբեք էլ չի եղել Ադրբեջանի կազմում, եւ ոչ մի խրան չկա նրա հետ միավորման համար:

Համագործակցություն՝ դե ֆակտո

Սկիզբը էջ 1

Այդ արձանագրությանը միացան ՌԴ վերին պալատի նախագահ Վլ. Շումեյկոն եւ Ղրղզստանի խորհրդարանի նախագահ Մ. Շերեմկուլովը: Արձանագրությամբ հակամարտող կողմերը պատրաստակամություն էին հայտնում նպաստել հրադադարի հաստատմանը:

Ինչ վերաբերում է Երեւանում ստորագրված համաձայնագրին, հարկ է նշել, որ այդ համաձայնագրով նախատեսվում է խորացնել երկու երկրների միջեւ քաղաքական, տնտեսական, գիտական եւ մշակութային կապերը: Միաժամանակ նախատեսվում է համագործակցություն իրականացնել 2 խորհրդարանների հանձնաժողովների միջեւ, կազմակերպել օրենսդրական գործունեության վերաբերյալ տեղեկատվության փոխանակում: Նախատեսվում է անցկացնել համատեղ ճնարկումներ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող միջազգային դատայանագրերի շուրջ: Միով բանիվ՝ խնդիրը հանգում է երկու խորհրդարանների միջեւ համագործակցության արդյունավետության բարձրացմանը:

Պատասխանելով այն հարցին, թե հակվա՞ծ են արդյոք երկու խորհրդարանների նախագահները այդ համաձայնագրի ստորագրմանը քաղաքական գնահատական տալ, եւ եթե այո, ապա ո՞րն է այդ գնահատականը, որն Արարքյանը նշեց, որ գոյություն ունեն իրողություններ՝ ՀՀ եւ ԼՂՀ խորհրդարանների գոյությունը, եւ պետք է ելնել դրանցից: Այսօր, ըստ որն. Արարքյանի, հաստատված հրադադարը արդյունք է ՀՀ եւ ԼՂՀ ղեկավարների գործադրած ջանքերի: «Մնացածը դատողություններ են», «կլոր սեղանների շուրջ ասված քառակուսի մտքեր», «մնացածը տավտոլոգիա է», նշեց Ամ նախագահը:

Իսկ ի դատասխան նույն հարցին, որն. Բաբուրյանն ընդգծեց, որ «Ղարաբաղը Հայաստանի մի մասն է»:

Նոր չվերթ՝ Երեւան-Թբիլիսի

ԵՐԵՎԱՆ, 1 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Երկարընդմիջումից հետո, այսօր բացվեց Երեւան-Թբիլիսի չվերթը: «Հայկական ավիաուղիների» ինքնաթիռներն առայժմ շաբաթը երկու անգամ, ուրբաթ եւ կիրակի օրերին, «Երեւանի» օդանավակայանից կանոնավոր թռիչքներ կկատարեն Թբիլիսի: Ինչպես տեղեկացրին «Հայկական ավիաուղիներում», եթե ուղեւորների քանակն ավելանա, կավելանան նաեւ չվերթերը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 2 տարի
Պետական եւ հասարակական-քաղաքական «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեր 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՍԱԿՈՒ ԱՎԵՏԻՍՅԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՄՎԵԼ ԴԻԱՆՅԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ / 562863
A STYLE հանձնարարական ծառայություն / 581841
Ոճը եւ ասածները ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
Apple Macintosh համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
Յրտոնը «Ազգին» դատարարի է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoyan st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՍՓՅՈՒՌՔ-ՀԱՅՐԵՆԻՔ

Վեհափառ հայրապետը օրհնեց ՀՕՖ-ի գրասենյակը

Սփյուռքում նկատվում է հոգածություն օգնության ծրագրի նկատմամբ

Երեկ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն այցելեց Հայ օգնության ֆոնդի հայաստանյան գրասենյակ եւ օրհնեց այն եռանդուն աշխատանք մաղթելով գրասենյակի աշխատակիցներին: Ամենայն հայոց կաթողիկոսը այն կարծիքին էր, որ այսուհետ ՀՕՖ-ը եւ նմանատիպ կազմակերպություններ ոչեմ է ունենան ընդհանուր հաղախականություն: Վեհափառը կոչ արեց այսուհետ լինել ոչ միայն ընդունող եւ աղաղող, այլեւ գործող: Նպատակ աղագային եւ միայն անգլյալի արժեքներով չիոլարտանալ:

Վերհիշելով իր տպավորությունները Գարեգին Ա-ն նշեց նաեւ, որ սփյուռքում որոշակի հոգածություն է նկատվում օգնություններ հասցնելու հարցում եւ այժմ նոր ձեւեր են ոլեմ, որոնցով սփյուռքահայությունը ներգրավվեն: Բացի այդ, սփյուռքն էլ այսօր ունի իր խնդիրները, որոնք նույնքան մեծ միջոցներ են պահանջում: Այնուհետեւ հանդիպումը ներկա Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ Արեւելյան թեմի առաջնորդ, ՀՕՖ-ի նախագահ Խաժակ արքեպս. ՀՕՖ-ի ղեկավարներ Եղնիկ Բալյանը, տնտեսագետ Ռաֆայել Բագդասարյանը, ՀՀ գիտությունների ակադեմիայի նախագահ Ֆաղեյ Սարգսյանը, «Հայաստան» բժշկագիտական կենտրոնի տնօրեն Գրիգորյանը, սեյսմիկ դիտակայանության ազգային ծառայության տնօրեն Սերգեյ Բալասանյանը դատմեցին այն ծրագրերի մասին, որ իրականացրել են ՀՕՖ-ի աջակցությամբ:

«Սոցիալական ոլորտում մի հաստված չկա, որ ՀՕՖ-ը մասնակցություն չունենա», ասաց նախարար Ռաֆայել Բագդասարյանը: Այնուհետեւ զրույցի թեման փոխվեց, եւ ներկաները խոսեցին Հայաստանում օրեցօր աճող գործազրկության խնդրի մասին, որը նախարար Բագդասարյանը դատմեցին սեփական նաեւնորհման գործընթացով: Ըստ նրա, 1997-98 թթ-ին գործազուրկների թիվը Հայաստանում կհասնի 200 հազարի:

Ա. Հ.

ՀԱՄԱՌՈՏ

Երեւանում նշվեց բուլղար ժողովրդի ազատագրման տոնը

«Հայաստան-Բուլղարիա» ընկերության նախագահ Էդուարդ Գրիգորյանը Արտահանման հետ մշակութային կապերի ընկերության դահլիճում երեկ շնորհավորեց ներկաներին «գարնան տոնի եւ թուրքական լծից Բուլղարիայի ազատագրման 118-րդ տարեդարձի առթիվ»: Բուլղար ժողովրդի ազատագրման տոնը իրավացիորեն համարելով հայերիս տոնը, դատմական գիտությունների դոկտոր Ջոնի Դասաբյանը իր խոսքում նշեց հայ եւ բուլղար ժողովուրդների դարավոր բարեկամության, 1877-78 թթ. ռուս-թուրքական դատերազմի եւ բուլղար ժողովրդի համար ստեղծված նոյասավոր դայմանների մասին: Եղբայրական ժողովրդի նկատմամբ իրենց դարտը սրբորեն կատարեցին հայերն ու բուլղարահայերը Անդրանիկի ու Նժդեհի ղեկավարությամբ: «Հայկական հանրագիտարանի» գլխավոր խմբագրի տեղակալ Յովհաննես Այվազյանը, ակադեմիկոս Գեւորգ Դարիբջանյանը, «Հայաստան-Ռումինիա» ընկերության նախագահ Հակոբ Առաքելյանը, դրոֆեսոր Ռուբեն Սահակյանը եւ ուրիշներ անդրադարձան բախտակից հայ եւ բուլղար ժողովուրդների դարավոր բարեկամությանը: Երեկոյի համերգային բաժնում հանդես եկավ դատերազմի եւ աշխատանքի բուլղարահայ վետերանների Սարգիս Բալթայանի անվան երգչախումբը:

Ց. Ս.

Համագործակցության ծրագիր. Սեւծովյան «կամրջով՝ Եվրոդա

«Ազգի» ընթերցողներն արդեն իրազեկ են այն ծրագրերին, որոնց իրականացումով լաստանավերի օգնությամբ Բաթումից, Փոթիից «կամուրջ» կբացվի մինչեւ Կոնստանցա, իսկ այնտեղից՝ Եվրոդա: Ռումինիայի տրանսդորտի նախարարության, ՀՀ տրանսդորտի եւ հաղորդակցության նախարարության ու Վրաստանի ծովային դեդարտամենտի ներկայացուցիչները փետրվարի 29-ին Երեւանում ստորագրեցին համագործակցության ծրագիր, որի համաձայն՝ Բեռլին, Պրահա, Վիեննա, Բուդադեշտ, Բելգրադ, Բուխարեստ քաղաքներից դետ է ուղիները Կոնստանցայով ձգվեն Բաթում, Փոթի նավահանգիստներ, այնտեղից՝ Բաքու, Թբիլիսի, Երեւան, Թեհրան: Տեխնիկական հնարավորությունների ուսումնասիրման եւ հետազոտման աշխատանքները նախատեսվում են մինչեւ ընթացիկ տարվա հունիսի 30-ը: Ըստ համաձայնագրի՝ փորձարկումը տեղի կունենա նոյեմբերի 15-ին: Համադատասխան նյութերին ծանոթացնի ՀՀ տրանսդորտի եւ հաղորդակցության լրատվության ծառայությունում:

Ց. Ս.

Սյունիքը՝ ամենամեծ մարզը

ԵՐԵՎԱՆ, 1 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Լույս է տեսել Հայաստանի Հանրադետության վարչատարածքային նոր բաժանման առաջին քարտեզը: Կադույտով, վարդագույնով, աղյուսագույնով միմյանցից տարանջատված մարզերից միայն Կոտայքի մարզը եւ մարզի կարգավիճակով Երեւանը դետական (արտաքին) սահմաններ չունեն, եւ սահմանամերձ շրջաններ կամ մարզեր արտահայտությունն արդեն տեղին չէ: Քարտեզը, որի հեղինակն է Սամվել Կարադետյանը, տդագրությանն օժանդակել է բեռլինաբնակ մեր հայրենակից դոկտոր Ժիրայր Քոչարյանը, ուղեկցվում է մարզերի տարածքի, բնակչության թվի, համայնքների, բնակավայրերի քանակի մասին եւ այլ տվյալներ դարունակող աղյուսակով: Աղյուսակի համաձայն՝ տարածքով ամենամեծը Սյունիքի մարզն է (4475 քառ. կմ), բնակչության թվով, երեւանից հետո՝ նախկին հինգ շրջաններ միավորող Լոռին՝ 392,2 հազար մարդ: Լոռին առաջինն է նաեւ քաղաքների թվով՝ 8: Ամենաշատ գյուղերը Շիրակի եւ Սյունիքի մարզերում են՝ 128-ական եւ այլն: Երեւանն ունի 162 քառ. կմ տարածք եւ 1,4 մլն բնակիչ: Բնակչության թիվը տրված է 1994 թ. տվյալներով: Քարտեզը զերծ չէ թերություններից, օրինակ, դայմանանշաններով հստակորեն չեն տարբերակվում մարզկենտրոնները մնացած քաղաքներից, աղյուսակում նշված քաղաքների թիվը եւ քարտեզում դատկերվածը երբեմն չեն համադատասխանում:

«Եթե Հայաստանի կազմակերդությունը թալացնելն էր նդատակը, կարծես թե հաջողեցին»

Տրանս Մարգարյանը կեղծիք է համարում «Դրոն» իրեն եւ ՀՅԴ-ին վերագրելը եւ փորձում ապացուցել իր տեսակետը

Տրանս Մարգարյանը գարնան առաջին օրվա հետ սկսեց իր ցուցմունքները հիմքում ունենալով միայն «Դրո» գործի 18 հատորները: «Գաղտնիքներ չեմ բացահայտելու, այլ մատնանշելու եմ գործի մեջ առկա եւ իշխանություններին լավածանոթ այն փաստերը, որոնց վրայից միտումնավոր կերդով, «ականջադրությամբ» անցել են քննիչները», հայտնեց նա: Քրեական գործի բացահայտումներից առաջ Մարգարյանը չմոռացավ կրկնել դատավարության առաջին օրն արտասանած խոսքերը «Ես ինձ մեղավոր չեմ ճանաչում»: Իր ցուցմունքը նա սկսեց «Դրո» խմբակը ՀՅԴ-ի հետ կապելու ու նրա դեկավարությունն իրեն վերագրելու «լրջությունն ու իրականությունը» վերլուծելով, որոնք հիմք են տվել նման մեղադրանքի: Դրանց դատճառը հանդանց «Դրոյին» դատկանող գրությունների մեջ ՀՅԴ բառի առատությունը. Արսեն Արծրունու ցուցմունքները եւ նրանց մոտ հայտնաբերված ատրճանակները: Այնուհետեւ հերքեց, որ Ա. Արծրունու համակարգչային գրությունները ՀՅԴ բառի շայլումները հիմք չեն տալիս «Դրոն» վերագրելու դատճանությանը. խնդրի որ ՀՅԴ կենտրոնական կոմիտեից եւ ՀՅԴ բյուրոյից ազատվելուց հետո Ա. Արծրունին ամենամեծ կասությունը դարձրեց ՀՅԴ-ի դեմ: Ինչ վերաբերում է դրանց հայտնաբերված ատրճանակներին, Արծրունին դատասխանեց, որ դրանք ինքնաշեղ են դատրաստված: Ինչ վերաբերում է Ա. Արծրունու համակարգչային գրությունները, ապա նրանց մեջ ոչ մի անուն չի հիշատակվում: Ինչ վերաբերում ՀՅԴ բառի շայլումներին, Արծրունին դատասխանեց, որ դրանք դատրաստվել են ՀՅԴ-ի դեմ: Ինչ վերաբերում «Դրոյին» դատկանող գրությունների մեջ ՀՅԴ բառի առատությունը

ԱԶԳ

ուղեցույց

Արեւը արդեն լեռան հետեւն էր անցել: Ես կցանկանայի գիշերել Սակուում, առավոտյան մեկնել Սբ. Թադեի վանք, ամբողջ օրը անցկացնել այնտեղ, սակայն Հայր սուրբը հոգնություն չէր զգում եւ համառորեն ոլորաններով լեռն ի վեր վարում էր իր ջիպը: 1990 ական թվականների սկզբին հայ առաքելավանքերը այս ճանապարհով էին գենք տեղափոխում Սբ. Թադեի վանք, այնտեղից՝ Ալաչկերտ, Վան...

Մեր առջեւ Շավարշյան դաշտն էր: Չախ կողմի Շարշարանաց կոչվող բարձունքին Սանդուխտ կույսի մատուռն էր: Նա հանուն հրիստոնեության առաջին կին նահատակն էր: Ըստ ավանդության, հայոց թագավոր Սանատրուկն ու իր դուստր Սանդուխտը Թադեւոս առաքյալի քարոզչության ազդեցությամբ հրիստոնեություն են ընդունում, սակայն հետո թագավորը կրկին հեթանոսության է գալիս ու հալածանքներ սկսում Թադեւոս ու աշխատանք է ծավալում մոնոֆիզական իշխանության կենտրոն Սոլթանեում, որը մոտ է Զանջան քաղաքին: Հետո նա անցնում է Մարաղա, Թավրիզ, հասնում է Սբ. Թադեւոս առաքյալի վանք, որի առաջնորդն էր Զաքարիա եպիսկոպոսը: Բոլոնիացի կաթոլիկ եպիսկոպոսը ծորդորի վաճառում հովհաննես երգեցկացու հետ դորոց է հիմնում, ապա անցնում Գողթանի գավառ՝ երնջակ, որը դառնում է կաթոլիկության կենտրոն: Սբ. Թադեի տաճարը խիստ վնասվում է 1328 թ. երկրաշարժից: Շուտով այն վերակառուցում է Զաքարե եպիսկոպոսը:

Վանքն ուներ հսկայական ազդեցություն Ատրպատականում, նրան էին պատկանում տասնյակ գյուղեր, որոնցից ստացած հասույթը սփոփեց եկեղեցականներին վանքին կից օժանդակ ֆինանսություն ստեղծել: Այստեղ մինչեւ օրս մնացել է ծիփիանը: Այն փաստորեն պտուտակաձեւ գերան էր, որի պտույտից մեկ այլ ծանր գերան

Պարսկաստանյան հանդիպումներ. Թադեւոս առաքյալի ու նրա վանքի տառապանքները

Բարդուղիմեոս առաքյալների ու նրանց հավատակիցների նկատմամբ: Գյուղի ծայրում, աղբյուրի մոտ վանական համալիրն էր, շրջապատված բարձր պարսպով ու աշտարակներով: Վանք գյուղի հայությունը 1948 թ. գաղթեց Խորհրդային Հայաստան: Հիմա գյուղը բոլորովին դատարկ է: Վանքի մի կողմում խոր ձորն է, մյուս կողմերից՝ բարձր պարիսպը:

Ինձ առաջին հերթին զարմանք պատճառեց այն հանգամանքը, որ տաճարի կեսը սեւ քարից էր կառուցված, մյուս կեսը՝ դեղնավուն: Պետք է, որ խիստ արտաքոց պատճառ լիներ, որ հայ ճարտարապետն ու շինարարը, ինչպես եւ պատվիրատուն, խախտեին գունային ներդաշնակության ավանդույթները, որ հաստատվել են հազարամյակների ընթացքում: Պաշտամունքային կառույցներում հայ շինարարը քարը քարի վրա դնելիս միշտ հանգամանորեն ընտրել է գունեւորանգները: Իսկ ահա այդ ավանդույթն այստեղ խախտվել է: Հետագայում ես պարզեցի, որ դրա պատճառը քաղաքական իրավիճակն էր: Պարսից թագաժառանգ Աբաս Միրզան, որը մեծ դիվանագետ էր (սակայն բույլ զորավար), որոշում է վանքը շտապ վերակառուցել եւ այստեղ տեղափոխել էջմիածնի կաթողիկոսական Մայր աթոռը: Դեղնավուն քարից էջմիածնահիպ հավելումը հին տաճարին իրականացնում է Սիմեոն արքեպիսկոպոս Բգնունին, որը ծրագրում էր այստեղ էլ կաթողիկոս օծվել: Զուգահեռաբար նախքան կաթողիկոսին զանազան միջոցներով սփոփում են, որ Ատրպատական տեղափոխվի: Աբաս Միրզան ծրագրում էր հայոց եկեղեցին կտրել Ռուսաստանի ազդեցությունից, նաեւ իր կողմը գրավել հայ ժողովրդին: 1821 թ. կաթողիկոսը էջմիածնից գալիս է Նախիջեւան: Սակայն Ներսես արքեպիսկոպոսը, որն իրականում ղեկավարում էր հայոց եկեղեցին, կոահելով բաղաքականի մտադրությունը, թուլական նիրհին թելադրում է անցնել Ռուսաստանի սահմանը եւ գնալ Արցախ՝ Շուշի քաղաք: Այդպես փրկվում է նաեւ էջմիածնի Մայր աթոռը: Իսկ Սբ. Թադեի վանքի զանգակատան կառույցը կիսատ է թողնվում, ինչի որ հաղորդական ծրագիրը չի իրականանում: Ինչպես երեւում է, պարսից թագաժառանգը միջոցներ չի խնայել, որպեսզի ծոխ տեսք տա այս կառույցին, այն օժտելով բարձրաճանգակներով: Այս տեսանկյունից այն Ախթամարի վանքն է հիշեցնում: Սբ. Թադեի վանքի տեղում հեթանոսության ժամանակ մեհյան է եղել, որի հիմքերի վրա էլ կառուցվել է հրիստոնեական տաճարը: Ավանդությունը պատմում է, որ տաճարի աջ կողմյան խորանում ամփոփված է առաքյալի մարմինը: Վանքի մասին հիշատակում են Մովսես Խորենացին (5 դդ) եւ Ղեւոնդ Գլակը (7 դդ.):

1247 թվականին Կոնստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսը հաստատ կոնդակով Սբ. Թադեւոս առաքյալի վանքը դարձնում է Ատրպատականի թեմի կենտրոն: 1310 ական թթ. Բոլոնիայից իր ճամփորդությունը Պարսկաստան է գալիս Բարթողիմեոս լատինադավան եպիսկոպոսը ու կրոնական եռանդուն աշխատանքներ է տանում Սուլթանիայում, որը մոտ է Զանջան քաղաքին: Հետո նա անցնում է Մարաղա, Թավրիզ, հասնում է Սբ. Թադեւոս առաքյալի վանք, որի առաջնորդն էր Զաքարիա եպիսկոպոսը: Բոլոնիացի կաթոլիկ եպիսկոպոսը ծորդորի վաճառում հովհաննես երգեցկացու հետ դորոց է հիմնում, ապա անցնում Գողթանի գավառ՝ երնջակ, որը դառնում է կաթոլիկության կենտրոն: Սբ. Թադեի տաճարը խիստ վնասվում է 1328 թ. երկրաշարժից: Շուտով այն վերակառուցում է Զաքարե եպիսկոպոսը:

Վանքն ուներ հսկայական ազդեցություն Ատրպատականում, նրան էին պատկանում տասնյակ գյուղեր, որոնցից ստացած հասույթը սփոփեց եկեղեցականներին վանքին կից օժանդակ ֆինանսություն ստեղծել: Այստեղ մինչեւ օրս մնացել է ծիփիանը: Այն փաստորեն պտուտակաձեւ գերան էր, որի պտույտից մեկ այլ ծանր գերան անընդհատ բարձրանում էր ու իջնում՝ իր ծանրության տակ տորելով, ճզմելով կտավատը: Ինչպես երեւում է, սա շատ հին մեխանիզմ է, գուցե եւ պտուտակի մեխանիզմի օգտագործման առաջին տարբերակներից:

Վանքը Արեւմտյան Հայաստանում բռնկված ադատամարտության ժամանակ ազգային հենակետի էր վերածվել: Հոգեւոր ու կրոնական սրբավայրը դարձավ հայրենիքի ազատության համար իրենց կյանքը զոհաբերողների սրբազան ուխտատեղին: Այդ տարիներին հայդուկային շարժմանը մեծ օգնություն էին ցուցաբերում սղեղցի Գեւորգ վրդ. Ղազարյանը, Թադիկ աբեղան, որին 1913 ին սպանեցին քրդերը, ու վանքի վերջին վանահայր Աշքերուն Պետրոս վրդ. Ղազարյանը: Երբ 1918 թ. ամռանը օսմանյան զորքերը ներխուժեցին Ատրպատական, Մենավորը, ինչպես կոչում էին Սբ. Թադեի վանքը, դարձավ Արազի շրջանի հայերի դիմադրության կենտրոն: Այստեղ աղաստան էին գտել հայ գաղթականները: Վանք ամրոցի պաշտպանները անընդհատ հետ էին մղում թուրքերի ու քրդերի գրոհները: Սակայն ուժերն անհավասար էին: Շատերը սպանվեցին վանքում: Ատրպատականի Հայոց առաջնորդարանն ու Թեմական խորհուրդը 1954 թ. սկսած հիմք դրեցին վանք կատարող ուխտագնացություններին, որոնք պատճառ դարձան նաեւ տաճարի ու հարակից շենքերի նորոգությանը, որին օժանդակում էին Իրանի կրթական նախարարությունն ու հնագիտական վարչությունը: Իսկ մասնագիտական նորոգման աշխատանքները սկսվել են Ֆրանսահայ ճարտարապետ Էդվարդ Ռուբելյանի ու Վարուժան Առաքելյանի գլխավորությամբ: Նորոգման աշխատանքները իրականացվում են պետական հատուկ ծրագրով: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը գնահատելով Վարուժան Առաքելյանի նշանակալից ծառայությունները Ատրպատականի հայկական հուշարձանները պահպանելու գործում, նրան պարգեւատրել է Ատոթի շքանշանով:

Նշան հահանան պատմեց, որ 1995 թ. ամռանը Սբ. Թադեւոս առաքյալի վանք էին այցելել շուրջ յոթ հազար ուխտավորներ Ատրպատականից, Թեհրանից, որոնք այստեղ մնացին երեք օր: Թավրիզյան «Դարյա» հյուրատան մոտ արգելակեց Հայր սուրբը: Իմ սենյակից ծայրեր էին լսվում: Հեռուստացույցը միացված էր, իսկ ներսում ոչ ոք չկար: Հավանաբար, սպասավորն էր միացրել ու մոռացել անջատել: Վերջին լուրերն էին հաղորդում: Չնայած հոգնել էի, չանջատեցի. իմ ուշադրությունը գրավեց Թավրիզում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքի մասին ռեպորտաժը: Թավրիզի գլխավոր հրապարակում հավաքված ավելի քան 100 հազար մարդ իր ցասումն էր արտահայտում ընդդեմ Բաքվի իշխանությունների ու Ադրբեջանի խորհրդարանի ազգայնական հայտարարությունների: Դրանով Բաքվի ղեկավարները հոյակել են իրենց քաղաքական կողմնորոշումը դեպի Թուրքիա՝ ի հակադրություն Իրանի Իսլամական Հանրապետության: Իմարկե, վիճելի է Ադրբեջանի Հանրապետության ժողովուրդների էթնիկապես բուրք լինելը: Նրանք 18-19 դդ. դարերում Իրանից Արաքսի դաշտ (կուր Արաքսի միջագետք) գաղթած ազարի պարսիկների մի հատվածն են, որոնք խառնվել են բնիկ ժողովուրդների՝ լեզգիների, ավարցիների, բաքաստարանցիների, ծալխուրների, ուտիների, բալիբեների, բաբերի, լակցիների հետ: Իսկ Իրանի կրոնական առաջնորդների ու կառավարության համար առաջնայինը իսլամն է, որը միավորում է Իրանի ժողովուրդներին, իսկ էթնիկական պատկանելությունը երկրորդական է մղված: Բոլորն էլ նախ իրանցի են: Վերջերս ազարի պարսիկ գործիչներից ոմանք, որոնք գտնվում են Թուրքիայի ու Բաքվի քարոզչական ազդեցության տակ, դիմել են Թեհրանի իշխանություններին, բողոքելով, թե ինչու հայերի երեխաներին հայերեն լեզվով կրթելու իրավունք է տրվում, իսկ իրենց՝ ոչ: Երկրի իշխանությունները պատասխանել են, որ հայ քրիստոնյաները կրոնական (եւ ոչ թե էթնիկական) փոքրամասնություն են ներկայացնում, իսկ մահմեդական ազարի պարսիկների, ինչպես եւ ողջ Իրանի համար միակ պետական ու կրոնական լեզուն պարսկերենն է:

ԱՐԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ գիտնականները հայտնաբերել են նյութերի նոր դաս

Ամորֆ նյութերը հայտնի են շատ վաղուց: Հնագույն ժամանակներից մարդկությունն օգտագործում է սիլիկատային ապակի եւ տարբեր խեժանյութեր: Վերջերս կտրուկ աճել է հետաքրքրությունն այդ նյութերի նկատմամբ: Դա բացատրվում է 20-րդ հարյուրամյակի 70-ական թվականներին նյութերի երկու նոր դասերի՝ ամորֆ կիսահաղորդիչների եւ ամորֆ մետաղային համաձուլվածքների ի հայտ գալով, որոնք կյանքի կոչվեցին տեխնիկական առաջընթացի կարիքներից ելնելով:

Գիտությունն սկսեց առանձնահատուկ տեղ հատկացնել ամորֆ համաձուլվածքներին, քանի որ այդ նյութերն ունեն եզակի հատկություններ եւ լայն կիրառություն: Կազմավորվել է հետազոտությունների յուրօրինակ ճյուղ՝ ամորֆ մետաղների մետալուրգիա: Ներկայումս փաստորեն բոլոր առաջավոր երկրներում այդ նյութերի հետազոտման եռանդուն աշխատանքներ են կատարվում:

Ամորֆ համաձուլվածքների հատկություններն են մեծ ամրությունը, բարձր ժանգադիմացկունությունը եւ էլեկտրական դիմադրությունը, ինչպես նաեւ մագնիսական բարձր հատկությունները: Այդ նյութերը իրենց դրսեւորել են որպես շատ հեռանկարային եւ բազմաղիսի հնարավորություններ ունեն զանազան կիրառության համար: Ներկայումս ամորֆ համաձուլվածքներ լայնորեն կիրառվում են արդյունաբերության մի շարք կարեւոր ճյուղերում՝ էլեկտրատեխնիկական ու ռադիոտեխնիկական, ինչպես նաեւ սարքաշինական արդյունաբերության մեջ: Ժամանակակից արդյունաբերության մեջ դրանց կիրառությունը հանգեցնում է արտադրանքի որակի բարձրացման եւ նոր սերնդի սարքերի ստեղծման հնարավորության:

Ներկայումս Արեւմուտքում մեծ կարեւորություն է տրվում արդի մետաղագործության եւ մեկ նոր ուղղության՝ նանոֆազային նյութերի զարգացմանը: Այդ նյութերը բնութագրվում են կանոնավորված կառուցվածքով: Նանոֆազային նյութերն իրենցից ներկայացնում են բյուրեղային փոշիներ, որոնց մասնիկներից յուրաքանչյուրը նանոմետրական (մետրի չնչին մասերի) չափեր ունի: Դրանց օգտագործման շրջանակը շատ լայն է. գեղահարդարման արտադրանքներից մինչեւ համակարգիչներ եւ ծանր տրակտորների շարժիչներ:

Այսպես, երկաթի օքսիդի փոշին ավելացվում է դիմափոշու եւ սվերաների մեջ, որի շնորհիվ ստացվում է հագեցված գույն: Նանոֆազային նյութերն օգտագործվում են արեւադաստգան խուցերը պատրաստելիս: Նանոֆազային տեխնոլոգիայով մշակված խեցեղենը կիրառվում է ավտոմոբիլային շարժիչներում, որի շնորհիվ մեծանում է վառելիքի օգտագործման արդյունավետությունը:

Տեխնոլոգիան կարեւոր կիրառություն ունի էլեկտրոնային, մասնավորապես համակարգիչների արտադրության մեջ:

Մասնագետների կարծիքով նանոֆազային ալյումինի փոշիները կարող են օգտագործվել ագրի վիրահատությունների ժամանակ կիրառվող դրոթեզներ եւ դրանց մասեր պատրաստելիս: Նանոկառուցվածքային նյութերի մաս, հետաքրքրությամբ տարածվող մասնիկները տեխնիկական խեցեղենը դարձնում են ավելի ամուր եւ ջերմակայուն:

ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Գերմանիայում, Չինաստանում, Հնդկաստանում նանոֆազային տեխնոլոգիայի զարգացմանը կարեւորագույն տեղ է հատկացվում նյութագիտական գիտահետազոտական ծրագրերում: Այդ երկրներում պետական մակարդակով հատկացվում է ամենատպավոր օժանդակություն, իսկ որ գլխավորն է, աղահովվում է ֆինանսական մեծ աջակցություն:

Այսպիսով, երկու ուղղություններ գիտության մեջ առավել հեռանկարայիններից են: Դատելով վերջին զարգացումներից, կարելի է ենթադրել, որ ամորֆ մետաղների եւ նանոֆազային նյութերի հատկությունների հնարավոր միավորման արժեքավորությունը:

Ոչ այնքան վաղուց հայ գիտնականները մշակել են նոր քիմիամիական տեխնոլոգիա, որի կիրառման շնորհիվ հայտնաբերվել է նյութերի նոր դասի՝ ամորֆ միաբաղադրիչ մետաղների ստացման եղանակը: Մինչեւ մինչեւ վերջերս գիտության մեջ այն կարծիքն էր իշխում, թե փաստորեն անհնար է ավանդական եղանակով ստանալ մաքուր (միաբաղադրիչ) մետաղներ: Երկրորդ նոր տեխնոլոգիայի կարեւորությունից, արդյունաբերության նախարարության կոլեգիաներից մեկում որոշում ընդունվեց «Ատոմ» գիտարտադրական ձեռնարկության բացման մասին: Մշակման հեղինակներն են «Ատոմ» ձեռնարկության տնօրեն Ռազմիկ Մալխասյանը եւ ՀՀ արդյունաբերության նախարարության արդյունաբերական քաղաքականության եւ գիտության գլխավոր վարչության ղեկի տեղակալ Գագիկ Խաչիկյանը: Գիտնականների խոսքերով, ինչպես ամորֆ, այնպես էլ նանոֆազային նյութերի հատկությունները միավորող նյութերի նոր դասը կունենա կիրառության լայն դաշտ. տիեզերական արտադրանքներից մինչեւ մեքենաշինություն: Բացի դրանից, նոր վերջին մետաղների նման ունի մագնիսական հատկություններ եւ դրա հետ մեկտեղ էլեկտրական մեծ դիմադրություն: Նշվում է, որ նյութերը կօգտագործվեն էլեկտրատեխնիկայում, ռադիոլեկտրոնիկայում, խեցեգործության մեջ եւ այլն:

Մասնագետները հետաքրքրություն եւ այդ բնագավառում հայ մասնագետների հետ համագործակցելու շահագրգռություն է արտահայտել Ֆրանսիայի Թուլոզ քաղաքի մետաղների տարրալուծման ու հետազոտման կենտրոնը, որտեղ ներկայումս արդեն սկսվել են ամորֆ միաբաղադրիչ մետաղների փոշու հնարավորությունների հետազոտման աշխատանքներ: Բացի դրանից, վերջերս Բոստոնում կայացած նյութագիտական միջազգային խորհրդաժողովում հայ գիտնականների մշակումը մեծ հետաքրքրություն առաջացրեց, իսկ ամերիկյան TTS կորպորացիան համագործակցելու ցանկություն արտահայտեց:

ՍՈՒՍԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայտարարություն

Ի գիտություն Երեւանի թիվ 8 ընտրատարածքի ընտրողների

Ազգային ժողովի պատգամավոր Ռուբեն Հակոբյանի գրասենյակից հայտնում են, որ այսուհետեւ թիվ 8 ընտրատարածքի բնակիչները կարող են հանդիպել իրենց պատգամավորի հետ յուրաքանչյուր ամսվա 2-րդ եւ 4-րդ հինգշաբթի օրերը հետեւյալ հասցեով՝ Հանրապետության փողոց 73 (նախկին Ալավերդյան), թիվ 114 դպրոց, առաջին հարկ, դպրոցի տնօրենի առանձնասենյակ:

Ընդունելության ժամերը 15:00-ից մինչեւ 19:00
Ռուբեն Հակոբյանի
պատգամավորական գրասենյակ

digitised by A.R.A.R.@

ԱՇԽ

Միջազգային

Հայաստան. Հուլիսի 5-ին ընտրեց խորհրդարան եւ ընդունեց նոր սահմանադրություն, որը նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին վերադարձնում է իշխանության լայն իրավասություն: Բազմապիսի ընդդիմադիր կուսակցությունների առաջնորդներ մասնակցել ընտրություններին (չափազանցությունն ակնհայտ է – *խմբ.*): Կառավարության կազմակերպած նախկին կոմունիստ դեկավարները: Ժողովրդավարական ուժերը մենաստաված են բազմաթիվ ընդդիմության մեջ կամ արտաքսված են երկրից: Խորհրդարանները լուծարվեցին եւ փոխարինվեցին ուրիշներով, որոնց ընտրությունները ժողովրդավարության օրենքներից շատ հեռու էին:

Ղազախստանի, Թուրքմենիայի եւ Ուզբեկստանի նախկին կոմունիստ դեկավարները ժողովրդավարական ուժերը մենաստաված են բազմաթիվ ընդդիմության մեջ կամ արտաքսված են երկրից: Խորհրդարանները լուծարվեցին եւ փոխարինվեցին ուրիշներով, որոնց ընտրությունները ժողովրդավարության օրենքներից շատ հեռու էին:

Ղազախստանի, Թուրքմենիայի եւ Ուզբեկստանի նախկին կոմունիստ դեկավարները ժողովրդավարական ուժերը մենաստաված են բազմաթիվ ընդդիմության մեջ կամ արտաքսված են երկրից: Խորհրդարանները լուծարվեցին եւ փոխարինվեցին ուրիշներով, որոնց ընտրությունները ժողովրդավարության օրենքներից շատ հեռու էին:

Ղազախստանի, Թուրքմենիայի եւ Ուզբեկստանի նախկին կոմունիստ դեկավարները ժողովրդավարական ուժերը մենաստաված են բազմաթիվ ընդդիմության մեջ կամ արտաքսված են երկրից: Խորհրդարանները լուծարվեցին եւ փոխարինվեցին ուրիշներով, որոնց ընտրությունները ժողովրդավարության օրենքներից շատ հեռու էին:

Ղազախստանի, Թուրքմենիայի եւ Ուզբեկստանի նախկին կոմունիստ դեկավարները ժողովրդավարական ուժերը մենաստաված են բազմաթիվ ընդդիմության մեջ կամ արտաքսված են երկրից: Խորհրդարանները լուծարվեցին եւ փոխարինվեցին ուրիշներով, որոնց ընտրությունները ժողովրդավարության օրենքներից շատ հեռու էին:

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Հետխորհրդային երկրներ. Հայագիտ հինգ տարի անց

ԵՐԵՎԱՆ. 29 փետրվարի. ՓԱՍՏ: «Ֆրանսիայ» լրատվական գործակալությունը հրատարակել է դիտարկումների մի ամփոփագիր, որով փորձ է արվում ներկայացնել նորանկախ հանրապետությունների քաղաքական կյանքի ընդհանուր դրությունը: Կոմունիստական վարչակարգի փլուզումից հետո այդ երկրների ժողովրդավարական կարգերը AFP-ի գնահատմամբ արեւմտյան չափանիշներով հեռու են ժողովրդավարական սկզբունքներից. միեւնույն ժամանակ մեծապես կախված են տվյալ երկրի ներքին քաղաքական, տնտեսական եւ սոցիալական գործոնների ներգործությունից: Ամփոփագրի սկզբում նշվում է, որ 1991 թ. ի վեր անկախացած 15 հանրապետությունները արդեն իսկ ընտրել են իրենց խորհրդարանները, նախագահներին եւ սահմանադրությունը: Այս նախաբանին հաջորդում են գնահատականներ, ըստ երկրների:

կողմնակից բոլոր մեծ հաղթանակ արձանագրեց, իսկ միջազգային դիտորդներ հայտնեցին, թե ընտրությունները ազատ էին, բայց ոչ արդար:

Ադրբեջան. Նոր խորհրդարանը կազմվեց նոյեմբերի 12-ին, մեկնեց նոր սահմանադրություն Հեյդար Ալիեւին տալով գերագույն իշխանություն: Կառավարության կողմնակիցներ հաղթանակ տարան, իսկ միջազգային դիտորդներ դատապարտեցին ընտրությունները դրանք ոչ ազատ, անարդար եւ «ահաբեկման դեպքերով» հատկանշվող:

Բալթյան երկրներ. Լատվիան եւ Էստոնիան հեղափոխիչական շրջանում կազմակերպեցին երկու ընտրություն, իսկ Լիտվան իր երկրորդ ընտրությունը կկազմակերպի հաջորդ տարի: Բոլորն էլ որակվեցին թիրեւ ազատ եւ արդար, ժողովրդավարության օրենքներին համապատասխան տարածաշրջանում: Հանրապետության բալթյան երկրներում առաջ ուսանողական ինքնակազմակերպումներ ունեցող տեղի հաղթահարման չեն ասացել, ինչը նրանց զրկում է հվեարկելու իրավունքից:

Բելառուս. Թվում է, թե վերադառնում է իր կոմունիստական անցյալին: Նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն մայիսին կազմակերպեց հանրաքվե, որի ընթացքում հվեարկողների մեծամասնությունը նախընտրեց խորհրդային խորհրդանիշով դրոշ եւ ուսանողներ: Բելառուսը վերջին խորհրդային երկիրն է, որ ընտրեց իր խորհրդարանը, իսկ նախագահ Լուկաշենկոն հաստատվեց, թե ընտրությունի ընթացքում հարգել է լայն արգելքներ:

Կենտրոնական Ասիա. Միապետության է, եւ իշխանության գլուխ են կանգնած նախկին կոմունիստ դեկավարներ: Ժողովրդավարական ուժերը մենաստաված են հասարակական ընդդիմության մեջ կամ արտաքսված են երկրից: Խորհրդարանները լուծարվեցին եւ փոխարինվեցին ուրիշներով, որոնց ընտրությունները ժողովրդավարության օրենքներից շատ հեռու էին:

Ղազախստանի, Թուրքմենիայի եւ Ուզբեկստանի նախկին կոմունիստ դեկավարները ժողովրդավարական ուժերը մենաստաված են բազմաթիվ ընդդիմության մեջ կամ արտաքսված են երկրից: Խորհրդարանները լուծարվեցին եւ փոխարինվեցին ուրիշներով, որոնց ընտրությունները ժողովրդավարության օրենքներից շատ հեռու էին:

Ղազախստանի, Թուրքմենիայի եւ Ուզբեկստանի նախկին կոմունիստ դեկավարները ժողովրդավարական ուժերը մենաստաված են բազմաթիվ ընդդիմության մեջ կամ արտաքսված են երկրից: Խորհրդարանները լուծարվեցին եւ փոխարինվեցին ուրիշներով, որոնց ընտրությունները ժողովրդավարության օրենքներից շատ հեռու էին:

Ղազախստանի, Թուրքմենիայի եւ Ուզբեկստանի նախկին կոմունիստ դեկավարները ժողովրդավարական ուժերը մենաստաված են բազմաթիվ ընդդիմության մեջ կամ արտաքսված են երկրից: Խորհրդարանները լուծարվեցին եւ փոխարինվեցին ուրիշներով, որոնց ընտրությունները ժողովրդավարության օրենքներից շատ հեռու էին:

Ուզբեկստանի նախագահները բոլորն կառուցելու իրենց դաշնությունը:

Միակ հուսալի երկիր Ղրղզստանն է, որ նախագահ Ասկար Ակաեւի միապետության ստեղծելու ճիգով առաջարկեց իր դաշնությունը մինչեւ 2001 թվականը երկարաձգելու հանրաքվե կազմակերպել: Սակայն խորհրդարանը ճախողեց նախագահի ծրագիրը:

Տաջիկստանում կարծր հաղթահարության կողմնակից կառավարությունը նախագահական եւ խորհրդարանական ընտրություններ կազմակերպեց, սակայն արգելեց ընդդիմությունը: Միջազգային դիտորդները նշեցին, որ ընտրությունների ընթացքում չկիրառվեցին ժողովրդավարական սկզբունքներ:

